— Տօնը (տունը) շէ՜ն կէնա, շէ՜ն։—
Ամեն կողմից ձայնակցում էին՝
«Շէ՜ն կէնա, շէ՜ն»։

Ապա նվիրատվությանը հրավիրվում էր երկրորդ բարեկամը... նույն եղանակով երրորդը և բոլոր ճարսնէվօրնէրը։ Նվերներ էին տալիս նույնիսկ բացակա բարեկամները, որևէ մեկի միջոցով։ Պատիվը պահանջում էր, որ նվերը պակաս չլինի այն գումարից, որը տղայի տերը տված էր լինում նվիրատվի տանը կատարված հարսանիքի ժամանակ։ Հավաքված գումարը հաշվում էին և հանձնում տղայի հորը։ Երբեմն դա ավելի մեծ գումար էր բռնում, քան թե արած ծախսերը։

Հնում թա̈fվօրը, թա̈fավօրը[27], փէսէն՝ փեսացուն շրջում էր հարսանիքը սկսելուց առաջ ազգականների տները, համբուրում նրանց օջախնէրն ու ստանում տանեցիներից նվերներ։

Այսպիսով, հարսանիքին այս կամ այն ձևով մասնակից էին լինում և՛ ննջեցյալ, և՛ կենդանի ազգականներն ու բարեկամները։

Ամեն տեսակ նախազգուշական միջոցներ էին ձեռք առնվում, որ հարսանեկան հանդեսներին չվտանգվի նոր զույգի ապագա բեղմնավորությունը և բախտավորությունը նախանձոտ մարդկանց կամ չար ոգիների կողմից, որ չար ոգիները չթուլացնեն տղայի առնական ընդունակությունը[28] և ապահովվի կնոջ բազմածնությունը։ Այդ նպատակով ընտրվում էր պսակվող զույգն ամեն չարից պաշտպանող չամուսնացած երիտասարդների մի խումբ։ Զանգեզուրում այդ չամուսնացած երիտասարդ ընկերները կոչվում էին մըկըռճէր, մի անուն, որը կրկնվում է նաև արևելյան Վրաստանի հարսանեկան սովորությունների մեջ—մաղարի՝ მაღარი։ Արևմտյան հայաբնակ գավառներում նրանք կոչվում են պարզորեն ազապնէր, իսկ նրանց գլխավորը՝ ազապբաշի, ազապպաշի՝ ամուրիների գլխավոր։ Զանգեզուրում էլ կար փըէսախպէր, որը միշտ կանգնած պիտի լիներ թա̈fվօրի կողքին և հսկեր նրան։ Մըկըռճէրը շարունակ շրջապատում էին նորապսակ զույգը։ Երբեմն երիտասարդներից ընտրվում էին մի քանի սաղինէր[29], որոնց պաշտոնն էր մատռվակի դեր կատարելը ճաշի ժամանակ։

Բուն հարսանիքը սկսվում էր ուրբաթ առավոտյան ընդհանուր հրավերով, բարձր կտրան վրա կանգնած զուռնա–դավալի նվագակցությամբ։ Սովորաբար նվագում էին Սա̈ճա̈րի եղանակը։ Սրանով նախ և առաջ կանչվում էին մըկըռճէրը։ Սա Մըկըռակօչի էր։ Միևնույն ժամանակ հրավեր էր ուղարկվում առանց խտրության և ամբողջ գյուղին։ Այդ նպատակով երեխաները և երիտասարդները շրջում էին գյուղի մեջ և պատահողին հրավիրում։ Տղայի հայրը կամ տան մեծերից մեկը մի ափսե փլավ, վրան մի եփած հավ դրած և մի շիշ օղի ձեռքն առած՝ գնում էր fավօրին[30] հրավիրելու, մինչդեռ փեսացուն իր մի քանի ընկերների հետ շրջում էր հատկապես մոտիկ ազգականներին հրավիրելու։

---

[27] Մեղրու բարբառով։

[28] Զգույշ էին լինում հարսանեկան եզը մորթելիս՝ չլինի՞ անբարյացակամ մեկը թէլ թաքախի արյան մէջ, ճանգույց կապի և մի ուրէ տեղ պաճի և դրանով տղայի առնական ընդունակությունը կապի։

[29] Հմմտ. արաբ. saqə և պարսկ. saqi -մատռվակ։ Տես Մալխասեանց Ստ., Հայեր. բաց. բառ., հ. IV, սաղի, էջ 177։

[30] Քավօր Մեղրու բարբառով՝ սըէ՛սա։